

Յիշենք՝ բանաձեւը.-

*«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (մաքսիմ), որով միա-
ժամանակ կարենաս ցանկալ, որ այդ՝ ընդհանուր օրէնք դառնայ»:*

Կանտ, իր պարտագիտական բարոյագիտութիւնը կը կոչէ *ծեւական* (Formal) բարոյագիտութիւն, որովհետեւ իր բարոյական սկզբունքը ձեւական է, այսինքն՝ ան որոշ կացութեան մը չի վերաբերիր, այլ անկախ կացութենէ եւ զանազան հանգամանքներէ, մի՛շտ կը գործէ եւ մի՛շտ ուժի մէջ կը մնայ: Կանտի պարտագիտական բարոյագիտութեան հիմնաւորումը, բացարձակապէս, կ'ապաւինի մարդու բանականութեան:

Քննադատութիւն.-

Նաեւ Կանտի այս գաղափարը վիճելի ու քննադատելի է, որովհետեւ բացարձակ բանականութիւն գոյութիւն չունի եւ այս պատճառով ալ բարոյագիտութեան բացարձակ հիմնաւորում մը անիմաստ կը դառնայ: Սակայն Կանտի բարոյագիտութեան հիմնաւորումը կարելի չէ հեռացնել բարոյագիտութեան մարզէն (ինչպէս հետագային պիտի մանրամասնենք), որովհետեւ հոն *լաւն ու բարիի* սկզբունքը առկայ է:

Կանտի *պարտագիտական բարոյագիտութեան* մասին, աւելի մանրամասն՝ «Բարոյագիտութեան Տեսութիւններ» Մաս – 5, էջ 160:

3.- Ա. Շոպենհաուր

Շոպենհաուրի բարոյագիտութեան հիմքը կարեկցութեան (գերմ.՝ Mitleid, անգլ.՝ Compassion) զգացումն է: Կարեկցութիւնը, մարդկային բնութեան ու գիտակցութեան մէջ իրողութիւն մըն է: Մարդ, որպէս անհատ, նկատելով աշխարհի մէջ գոյութիւն ունեցող տառապանքը, այլ մարդոց հանդէպ կարեկցութիւն տածելով, անոնց հետ ինքզինք նոյնացած կը համարէ ու ինքզինք անոնց տառապանքին մօտիկ կը զգայ կամ կը փորձէ «կիսել» տառապանքը: Այս միջոցով կը յաղթահարուի մարդու եսասիրութիւնը (Egoism) եւ կը յայտնաբերուի՝ անոր այլասիրութիւնը (Altruism):

Քննադատութիւն.-

Նաեւ Շոպենհաուրի այս գաղափարը վիճելի ու քննադատելի է, որովհետեւ այստեղ Շոպենհաուր բարոյագիտութեան հիմնաւորում մը չի ներկայացներ, այլ բարոյագիտութեան հիմք մը միայն, որ կարեկցութեան զգացումն է: Ասոր կողքին, այստեղ եթէ բոլորովին չի բացակայիր *լաւն ու բարիի* սկզբունքը, որ բարոյագիտութեան մէջ էական դիրք կը գրաւէ, սակայն ան բոլորովին յարաբերական է:

Զգացումի բարոյագիտութեան մասին, աւելի մանրամասն՝ «Բարոյագիտութեան Տեսութիւններ» Մաս – 5, էջ 208: